ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 փետրվարի 2025 թվականի № 56-Ա

ՀԱՍՄԻԿ ԳՈԳՈԼՅԱՆԻ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՏՆՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 118-րդ հոդվածի 2-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Քաղսիի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2025 թվականի փետրվարի 12-ի № 5 գրությունը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Քաղսիի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Հասմիկ Գոգոլյանի*** ժամանակավոր անաշխատունակության պատճառով՝ կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության ընտանեկան բուժքույր ***Գայանե Գրիգորյանի***, իսկ կազմակերպության սպասարկման տարածքի բնակչության առաջնային բժշկական օգնության և սպասարկման իրականացումը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Լեռնանիստի առողջության առաջնային պահպանման կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության ընտանեկան բժիշկ ***Գոհար Ասատրյանի*** վրա *(համաձայնությամբ)*, մինչև տնօրենի աշխատանքի ներկայանալը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և դրա գործողությունը տարածվում է *2025 թվականի հունվարի 13-ից* ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՄԱՀԱԿՅԱՆ

2025 թվականի փետրվարի 13
ք. Հրազդան